ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2025 թվականի N 1008 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման և հաշվառման վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, վերլուծման և արխիվացման կարգը հաստատելու մասին» N 23-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Վարչական վիճակագրական հաշվետվությունը ներկայացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի միջոցով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 25-ը:».

2) հավելվածի 7-րդ կետում «Վերլուծված տվյալներն ամփոփվում են և տարեկան վիճակագրական ծրագրով սահմանված ժամկետում ներկայացվում են

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե: Ամփոփ տվյալներն արխիվացվում են (պահպանվում են) էլեկտրոնային տարբերակով, համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով՝ լիազոր մարմնի կազմում գործող մասնագիտացված կառույցի կողմից» բառերը փոխարինել «Վերլուծված տվյալներն ամփոփվում և արխիվացվում են (պահպանվում են) «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգում: Ամփոփված տվյալները տարեկան վիճակագրական ծրագրով սահմանված ժամկետում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե:» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ